Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ՇՏ2 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 6.1. Շիրակ - ցերեկային կենտրոն (Արթիկ, Գյումրի) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025 -30.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 19.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br><br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 42 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է թվով 4 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ՝ գեղարվեստ, առողջ ապրելակերպ, մանրի ընթերցում. հմուտ ձեռքեր. կյանքի հմտություններ՝ ինքնօգնություն, որոնց մասնակցել են 31 շահառուներ:
  Կազմակերպվել է թվով 7 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 40 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Տարեցների միջազգային օր. էքսկուրսիա՝ Խոր Վիրապ, Արենի և Նորավանք, Սոցիալական աշխատողի օր. Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր. Էքսկուրսիա Գյումրու տուն-թանգարաններ. հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության օր. Ամանորյա միջոցառում:
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է թվով 7 հանդիպում՝ ուղղված շահառուների խմբային աշխատանքում ինտեգրմանը, խմբային աշխատանքի հմտությունների ձեռքբերմանը, հաղորդակցման հմտությունների զարգացմանը, որին մասնակցել է թվով 29 շահառու:
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Ճանաչողական այց դեպի Արենի, Նորավանք և Խոր Վիրապ (տե՛ս հետևյալ հղումով՝ https://surl.cc/hxipwp),
- Մասնագիտական համագործակցություն՝ «Mia Bella» գեղեցկության սրահի հետ (տե՛ս հետևյալ հղումով՝ https://surl.li/pumjmq),
- Ամփոփելով անցնող աշնան գեղեցիկ պահերը (տե՛ս հետևյալ հղումով՝ https://surl.li/pvbbgw),
- Պատրաստում ենք ամանորյա զարդարանքներ (տե՛ս հետևյալ հղումով՝ https://surl.lu/wbcgsn),
- Այցելեցինք Գյումրու մշակութային ժառանգությունը ներկայացնող տուն-թանգարաններ (տե՛ս հետևյալ հղումով՝ https://surl.lt/cdekcc):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Արթիկի ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվել ցանկացող անձինք ուղեգրման համար անհրաժեշտ բժշկական քարտի թմրաբանի և աղիքային խմբի վարակիչ (այդ թվում՝ մակաբուծային) հիվանդությունների հարուցիչների նկատմամբ հետազոտություն անցնելու համար պետք է այցելեն Գյումրու պոլիկլինիկա՝ Արթիկում համապատասխան հետազոտությունների բացակայության պատճառով, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում շահառուների համար, և բարդացնում ուղեգրման գործընթացը:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված են հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում.
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 40/42 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 24 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 1 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 0 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 0 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 41 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 33 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 29 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 31 |
| 5.1 | ինքնօգնություն՝կյանքի հմտություններ | 17 |
| 5.2 | գեղարվեստ | 17 |
| 5.3 | առողջ ապրելակերպ | 17 |
| 5.4 | հոգեբանական | 17 |
| 5.5 | մամուլի ընթերցում | 19 |
| 5.6 | հմուտ ձեռքեր | 18 |
| 6 | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 40 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 9 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | - |

Կազմակերպության ղեկավար ___Երվանդ Մխիթարյան___ «19» 12. 2025թ
[illegible]